**Արձանագրություն №1 (285)**
**ԵՊՀ-ի ռուս բանասիրության ֆակուլտետի գիտական խորհրդի 2015 թ.- ի նոյեմբերի 23-ի նիստի**
/առաջին նոր կանոնադրությունից հետո/

Ֆակուլտետի գիտխորհրդի նիստին ներկա են 28 անդամներից 25-ը: Ապահովված է անհրաժեշտ քվորումը:
Գիտխորհրդի նիստին ներկա է ԵՊՀ-ի պրոռեկտոր Ա.Կ. Գրիգորյանը:
Բաց քվեարկությամբ միաձայն ընտրվեց գիտխորհրդի նիստի նախագահողը - ռուս գրականության ամբիոնի վարիչ՝ բ.գ.թ., դոցենտ Լ.Գ. Հակոբյանը:
Նախագահողը ներկայացրեց օրակարգը/

**Օրակարգ.**

1. Ռուս բանասիրության ֆակուլտետի դեկան Պ.Բ. Բալայանի հաշվետվությունը:

2. Ընթացիկ հարցեր:

**1-ին հարցով** ելույթ ունեցավ ռուս բանասիրության ֆակուլտետի դեկան Պ.Բ. Բալայանը: Հաշվետվությունը կցվում է:
Դեկանի եկույթից հետո արտահայտվեցին ամբիոնի վարիչներ Լ.Բրուտյանը, Բ. Խոջումյանը, Ս.Լալայանը, Լ.Հակոբյանը: Ելույթներով հանդես եկան պրոֆ. Մ.Ջանփոլադյանը, պրոֆ. Լ.Մաթևոսյանը, դոցենտ Ն.Գոնչարը: Ելույթ ունեցավ նաև ԵՊՀ-ի պրոռեկտոր Ա.Կ. Գրիգորյանը: Առաջարկվեց դեկանի աշխատանքը գնահատել բավարար, այնուհետև բաց քվեարկությամբ 2014-2015 ուս. տ. դեկանի աշխատանքը միաձայն գնահատվեց բավարար: Պրոռեկտոր Ա.Կ. Գրիգորյանը պատասխանեց ելույթներում հնչեցրած հարցերին:

**2.** Ընթացիկ հարցեր: Լսեցին՝ ԵՊՀ ռուս բանասիրության ֆակուլտետի ռուսաց լեզվաբանության, տիպաբանության և հաղորդակցման տեսության ամբիոնի ասպիրանտ ***Մարիամ Գեղամի Արշակյանի*** ատեստավորման հարցը: Որոշեցին՝ Ատեստավորել ԵՊՀ ռուս բանասիրության ֆակուլտետի ռուսաց լեզվաբանության, տիպաբանության և հաղորդակցման տեսության ամբիոնի ասպիրանտ ***Մարիամ Գեղամի Արշակյանին:***

Նախագահող՝ Լ.Գ. ՀԱԿՈԲՅԱՆ
Գիտական խորհրդի քարտուղար՝ Մ.Ռ. ԴՊԻՐՅԱՆ